ԲՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարարության էլեկտրոնային պարբերաթերթ 6/2017




# Հիմք է դրվում նոր ու հեռահար համագործակցության

Բնապահպանության նախարարության և «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև փետրվարի 22-ին ստորագրվել է համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: Այս մասին տեղեկացրին ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից:

Գործընկերային փաստաթուղթը ստորագրել են ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս» ընկերության հիմնադիր-տնօրեն Վահան Շաքարյանը: Նախարար Արծվիկ Մինասյանը ողջունել է ընկերության հետ գործընկերային հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու նախաձեռնությունը, նշել շրջակա միջավայրի պահպանության, վերականգնման ու բարելավման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման նպատակով ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական լուծումների ներդրման անհրաժեշտությունը: Նախարարը կարևորել է հուշագրի ստորագրումը «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս»-ի հետ, որը ոլորտում կայացած ընկերություններից է, իրականացնում է արդի և բազմաֆունկցիոնալ հետազոտություններ, և, որը հայկական առաջին բջջային հեռախոսը՝ ԱրմՖոնը ստեղծող ընկերությունն է: «Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս»-ի հիմնադիր-տնօրեն Վահան Շաքարյանը ողջունել է համագործակցության մասին հուշագրի ստորագրումը բնապահպանության նախարարության հետ, նշելով, որ ընկերությունը պատրաստակամ է միավորելու ջանքերն ու կարողությունները շրջակա միջավայրի պահպանության գործում արդյունավետ աշխատանքի և փոխգործակցության համար:

«Թեքնոլոջի ընդ սայնս դայնամիքս»-ի մասնագետները ներկայացրել են բազմաթիվ ծրագրերից մի քանիսը, այդ թվում, կենսապլաստիկ տոպրակների արտադրության, անտառների վերականգնման գործընթացում նորարարական մեթոդների կիրառման, բարձր տեխնոլոգիական նոթաստերի և համակարգչային հավելվածի կիրառման հնարավորությունները:

## Դիլիջան ազգային պարկը այսուհետ կկառավարվի նորովի



Կառավարության հերթական նիստում ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը փետրվարի 23-ին ներկայացրել է ոլորտին վերաբերող հարցերը: Գործադիրը հավանության է արժանացրել «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանը և առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: «Դիլիջան» ազգային պարկ պետական ոչ առևտրային կազմակերպության նախորդ կառավարման պլանն ընդգրկում էր 2007-2011 թվականները: ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ և Կովկասի բնության հիմնադրամի ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ մշակվեց սույն կառավարման պլանը, որն ընդգրկում է 2017-2026 թվականները: 2021 թվականին կիրականացվի միջանկյալ գնահատում: Այս մասին տեղեկացրին ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից:

Կառավարման պլանի գերակա նպատակն է ազգային պարկի գոտիավորումն առավելագույնը համապատասխանեցնել Բնության պահպանության միջազգային միության կողմից 2-րդ կատեգորիայի համար սահմանված չափորոշիչներին, այն է՝ ազգային պարկ, որտեղ էկոհամակարգերը պահպանվում են հիմնականում ռեկրեացիայի նպատակով:

Վերլուծությունների հիման վրա սահմանվել են ազգային պարկի գերակայությունները և զարգացմանն ուղղված միջոցառումները: Կառավարման պլանի նախագիծը և առաջնահերթ գործողությունները քննարկվել են տեղի համայնքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Պետություն-մասնավոր հատված համագործակցությունը կարևոր դեր է խաղալու այս գործում, քանզի այն առաջարկում է քաղաքականության հզոր գործիք՝ բարելավել պարկերի տնտեսական կայունությունը և ծառայությունների որակը, ներգրավել արդյունավետ ներդրումներ և դրա միջոցով նպաստել կենսաբազմազանության պահպանման հիմնական գործառույթի իրագործմանը: «Դիլիջան» ազգային պարկը միջազգային դոնորների կողմից մեծ հետաքրքրություն կներկայացնի՝ աջակցելու էկո-զարգացմանը և բնության պահպանմանը:

Էկոզբոսաշրջության կայուն զարգացումը նպաստելու է գյուղական զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումների և կունենա տնտեսական զարգացման մուլտիպլիկատիվ ազդեցություն, ոլորտը կբարգավաճի՝ կենտրոնանալով տարածաշրջանի բնության և մշակութային, պատմական տեսարժան վայրերի վրա, և բնության վրա հիմնված զբոսաշրջությունը, ոլորտում նոր աշխատատեղերի հնարավորությունների միջոցով, կնպաստի կենսամակարդակի աճին:

Գործադիրը նաև հավանության է արժանացրել «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագիրը, որն ընդգրկում է վեց՝ վարչական, պահպանության, մոնիթորինգի և գիտական աշխատանքների, ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման, այցելուների, կրթության և հանրային իրազեկման ծրագրեր:

Կառավարության նիստում հավանության է արժանացել նաև «Գետի ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդիկան» որոշման նախագիծը:

## Վերջապես կլուծվի նաև Շոռնուխ գյուղի խմելու և ոռոգման ջրի հարցը

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 07.03.03 թ. N217 –Ն և . N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շոռնուխ գյուղի խմելու-կենցաղային և 25 հա հողատարածքի ոռոգման նպատակներով համայնքի վարչական տարածքի «Վերին թաղի», «Ներքին թաղի» և «Վաղոյի» ստորերկրյա ջրաղբյուրներից 0,7 լ/վ և 18,4 լ/վ ջրաքանակներով ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին և փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17:00-ից – 18:00-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ): Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2017 թվականի փետրվարի 27-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

# «Կանաչ կլիմա» հիմնադրամը ընդլայնում է իր գործունեության շառավիղը Հայաստանում

Փետրվարի 24-ին ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության /ՊԳԿ/ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի գյուղատնտեսության գծով պատասխանատու Ավետիք Ներսիսյանի և ՊԳԿ-ի հայաստանյան ներկայացուցչի օգնական Գայանե Նասոյանի հետ։ Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը, նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, նախարարության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները։ Քննարկվել են բնապահպանության նախարարության և ՊԳԿ-ի միջև համագործակցության ընդլայնման հարցերը,մասնավորապես, խոսվել է անտառվերականգնման աշխատանքների, հողերի դեգրադացիայի դեմ արդյունավետ գործողությունների ձեռնարկման անհրաժեշտության մասին։ Նախարար Արծվիկ Մինասյանը հակիրճ ներկայացրել է հարցերի առնչությամբ նախարարությունում իրականացվող աշխատանքները, նշել «Կանաչ կլիմա» հիմնադրամի հետ փոխգործակցության ընդլայնման տարբերակները, անդրադարձել բնօգտագործման և բնապահպանական վճարները շրջակա միջավայրի պահպանությանն ուղղելու ծրագրային առաջարկներին։




Նախարարը կարևորել է ՊԳԿ-ի հետ համատեղ աշխատանքի ընդլայնումը և պատրաստակամություն հայտնել գործընկերային հարաբերությունների խորացման համար։ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել հանդիպման և համագործակցության պատրաստակամության համար։ Կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել գործընկերային փաստաթղթի պատրաստման շուրջ, ինչն ավելի կոնկրետ և առարկայական կդարձնի խնդիրների լուծման հնարավորությունները։

# Հանդիպում Արարատյան դաշտի ձկնաբույծների հետ

Փետրվարի 16-ին Արարատյան դաշտի ձկնաբույծների հետ տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում ներկայացվել և քննարկվել է 2016 թ. հուլիսի 19-ին ՀՀ բնապահպանության նախարարության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա, 2017 թ. ընթացքում Արարատյան դաշտի ձկնաբուծարաններում փաստացի ջրօգտագործման ավտոմատ, կենտրոնացված, առցանց վերահսկման 20 համակարգի ներդրման գործընթացը։ Քննարկման արդյունքում ավտոմատ վերահսկման համակարգերի ներդրման շուրջ, նախնական համաձայնություն ձեռք չի բերվել։






# «Դիլիջան» ազգային պարկը շարունակում է աշխատել ուժեղացված ռեժիմով




ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկում շարունակվում են ուժեղացված ռեժիմով ստուգայցերը ապօրինի ծառահատումների և որսագողության դեպքերը կանխարգելելու և բացահայտելու նպատակով: Աշխատակիցների կողմից՝ շուրջօրյա շրջայցերի ընթացքում հայտնաբերվել է 2 անտառխախտման դեպք (ապօրինի 8 ծառահատում), կազմվել են անտառխախտման արձանագրություններ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: «Դիլիջան» ազգային պարկի տարածքների հսկողությունը ուժեղացնելու և հակահրդեհային միջոցառումները առավել արդյունավետ կազմակերպելու համար պահպանության բաժնի աշխատակիցների կողմից կազմվել է հակահրդեհային ծրագիր, որը ներկայացվել է Տավուշի մարզպետարան համաձայնեցման: Համապատասխան նյութեր է տրամադրվել «Դիլիջան» քաղաքի և Տավուշի մարզային թերթերին որսագողության, ապօրինի ծառահատումների, արածեցումների, ապօրինի շինությունների, հողազավթումների հրդեհների դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու վերաբերյալ: Բնակչությանը տրամադրվել է քամատապալ, հողմատապալ փայտանյութից առաջացած 30խ.մ. վառելափայտ: Էկոերթուղիների ընթացիկ վիճակին ծանոթանալու նպատակով իրականացվել է շրջայց Դիլիջան-Մաթոսավանք էկոերթուղով: Կատարվել է Dilijan NP ֆեյսբուքյան էջի թարմացում:



# Նոր ստուգայցեր

Ուրախությամբ արձանագրենք, որ նախարարության «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի պահպանվող տարածքներում շաբաթվա ընթացքում իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել: Իրականացվել են ստուգայցեր «Զանգեզուր» կենսոլորտային համալիրե-ի «Շիկահող» պետական արգելոցում, որոնց ընթացքում տարածքում հանդիպել են 5 հատ եվրոպական այծյամ, 4 հատ աղվես, 4 հատ աքիս, 3 հատ քարակզաքիս, 1 հատ եվրոպական անտառային կատու, և 14 հատ շնագայլ: Չվող թռչնատեսակներից վաղաժամ վերադարձ է նկատվել սովորական սարյակի մոտ:

# Բնապահպանության նախարարությունը բացասական եզրակացություն է տվել «Գնդեվանք-1» փոքր հէկ-ի նախագծին

ՀՀ բնապահպանության նախարարությունը բացասական եզրակացություն է տվել «Գնդեվանք-1» փոքր ՀԷԿ-ի կառուցման հայտին: ՓՀԷԿ-ի կառուցման հայտը բնապահպանական փորձաքննության էր ներկայացրել «Ամրիտամ» ՍՊԸ-ն:

«Գնդեվանք-1» փոքր ՀԷԿ-ը նախատեսվում էր կառուցել Արփա գետի ավազանում՝ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում: ՓՀԷԿ-ի համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում էր իրականացնել Արփա գետից՝ 1903,0 մ նիշում, Կեչուտի ջրամբարի պատվարի հարևանությամբ, իսկ ջրառի կետում բնապահպանական թողքի մեծությունն ընդունված էր 1,9 խմ/վրկ: Փորձաքննական եզրակացության մեջ նշված է, որ 2017 թվականին Արփայի գետավազանում նախատեսվում է նվազեցնել հիդրոէներգետիկ պոտենցիալը՝ կապված «Արփա-Սևան» թունելի շահագործման հետ: Իսկ ՓՀԷԿ-ի նախագծով ներկայացված ջրատնտեսական հաշվարկներում հաշվի չի առնված «Արփա-Սևան» թունելով Սևանա լիճ բաց թողնվող ջրաքանակը, որի արդյունքում Արփա գետի ջրաքանակը կտրուկ կնվազի և կբերի ՓՀԷԿ-ի ոչ նպատակային շահագործման: Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում Ջերմուկ համայնքում ս.թ. հունվարի 27-ին անցկացված հանրային լսումների ժամանակ բնակիչների մի մասը դեմ է արտահայտվել ՓՀԷԿ-ի կառուցմանը: Մասնակիցները նշել են, որ Արփա գետի այդ հատվածն արդեն իսկ ծանրաբեռնված է գոյություն ունեցող «Կեչուտ» ՓՀԷԿ-ի շահագործմամբ, և ներկայումս համայնքում առկա է ոռոգման ջրի անբավարարություն, որն ավելի կսրվի նոր ՓՀԷԿ-ի շահագործման դեպքում: Հիշեցնենք՝ համաձայն արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի՝ «Ամրիտամ» ՍՊԸ-ի միանձնյա բաժնետերը Սեդրակ Գարիկի Առուստամյանն է, ով նաև Գագիկ Ծառուկյանին պատկանող «Մուլտի գրուպ կոնցեռն» ՍՊԸ-ի տնօրենն է: Փհէկի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ստացվել է նաև ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» և ԲՆ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության բացասական կարծիքները: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների համաձայն՝ Արփա գետի վրա արդեն իսկ գործում է երեք հէկ. «Արենի հէկ» ՓԲԸ-ն շահագործում է«Արենի» հէկը, ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանի «Ջերմուկի հիդրոտեխ» ՍՊԸ-ն՝ «Ջերմուկ հէկ-2»-ը, «Արփա էներգիա» ՍՊԸ-ն՝«Արփա» հէկը: Բացի սրանցից, «Ազատեկ հէկ» ՓԲԸ-ն շահագործում է նույնանուն հէկը Արփա գետից սնվող Վայքի ջրանցքի վրա:Եվս 3-ը, համաձայն ՀԾԿՀ-ի տվյալների, կառուցման փուլում են. ինչպես նշեցինք վերևում, Առուստամյան եղբայրների մասնակցությամբ «Ջերմուկ տուրբշին» ՍՊԸ-ն կառուցում է 1900 կՎտ հզորությամբ հէկ: «Ջինջ Արփա» ՍՊԸ-ն կառուցում է ավելի քան 3000 ՄՎտ հզորության «Արփա-3» հէկը: «Արփա էներգիա» ՍՊԸ-ն, ըստ ամենայնի, ավելացնում է իր «Արփա» հէկի հզորությունը 740 կՎտ-ով:







# «Ձրվեժ» անտառպարկը որպես էկոճանաչողական մշակույթի լուրջ դարբնոց






Հայ ժողովուրդն իր բազմադարյան գոյության ընթացքում աչքի է ընկել ոչ միայն հսկա բերդեր և երկարաձիգ ջրանցքներ կերտելով, այլև կանաչ շինարարությամբ: Բազմաթիվ են պատմական այն փաստերը, որոնք վկայում են, որ հայ թագավորները համաժողովրդական գործ համարելով կանաչապատումը, ժողովրդի ջանքերով՝ մայրաքաղաքների մեծ շենքերի շրջակայքում ստեղծել են անտառներ, պուրակներ, ծաղկանոցներ՝ արևաշատ Հայաստանում կլիման մեղմացնելու, շրջապատը գեղեցկացնելու նպատակով: Այդ գեղեցիկ ավանդույթները շարունակվելով հասել են մեզ և այն առանձնապես մեծ զարգացում ունեցավ Սովետական Հայաստանում:

«Ձրվեժ» անտառպարկը հիմնադրվել է 1977 թվականին, որի նպատակն է եղել Երևան քաղաքի էկոլոգիական վիճակի առողջացումը, բնական միջավայրում մարդկանց հանգստի, մշակութային և գեղագիտական պահանջների բավարարումը: «Ձրվեժ» անտառպարկը քաղաքը զարդարում է հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերից: Անտառպարկի ստեղծման հիմքում եղել է այն գաղափարը, որ հանրապետության անտառազուրկ շրջաններում գտնվող քաղաքների շրջակայքը ծածկված լինի կանաչ գոտիներով, որոնք, ըստ էության, հանդիսանում են քաղաքների օդի մաքրման հիմնական աղբյուրներ, ինչպես նաև սելավներից ու քամիներից պաշտպանման միջոցներ: Տասնամյակների ընթացքում բազմաթիվ նվիրյալների ջանքերով Ձրվեժում հաջողվեց ստեղծել մայրաքաղաքին մոտ գեղազարդ տարածք: Անտառպարկ ներմուծվեց մինչ օրս մերկասերմերի և ծածկասերմերի կարգին դասվող 133 ծառաթփատեսակներ և պարտիզային ձևեր, որոնց մեջ գերակշռում են վարդազգիների ընտանիքին դասվող բույսերը: «Ձրվեժ» անտառպարկը համարվում է պարկաշինության տիպիկ օրինակ և դրա շնորհիվ այն ունի մեծ ուսումնաճանաչողական և էկոդաստիարակչական ներուժ, ուստի հաշվի առնելով վերը նշվածը «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից տարվում են աշխատանքներ՝ գործնական ուսումնական ծրագերի կառուցման և անցկացման ուղղությամբ: Անտառպարկում ողջ տարին անցկացվում են տարաբնույթ ուսումնաճանաչողական միջոցառումներ: Կազմակերպությունը համագործակցում է մի շարք հիմնական դպրոցների և կրթահամալիրների հետ ինչպիսիք են՝ «Փոքրիկ Իշխան»-ը, «Մխիթար Սեբաստացի»-ն, «Շահամիր Շահամիրյան»-ը, որտեղ դպրոցականների հետ անցկացվում են դաս-միջոցառումներ, դաս-էքսկուրսիաներ՝ «մարդը և բնությունը» թեմայով, կազմակերպվում են տարածքի մաքրման, ծառատնկման և խնամքի և այլ տեսակի էկոդաստիարակչական աշխատանքներ: Կազմակերպության գիտության բաժնի կողմից կնքվել են պայմանագրեր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Երևանի պետական համալսարանի հետ: Ըստ վերը նշյալ պայմանագրերի ՀԱԱՀ-ի ագրոնոմիական ֆակուլտետի, ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետի ուսանողներն իրենց ուսումնաճանաչողական պրակտիկան են անցնում «Ձրվեժ» անտառպարկում, իսկ ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողները՝ ուսումնաարտադրական պրակտիկան ուսումնաարտադրական հաշվետվությունները ներկայացնում են Կազմակերպության գիտության բաժնին: Այս գործնական պարապմունքների ընթացքում ուսանողները ԲՈՒՀ-երում ստացած տեսական գիտելիքները կարողանում են կիրառել գործնական աշխատանքների ժամանակ: Դա հնարավորություն է տալիս նրանց արժեքավոր գիտելիքներ ձեռք բերելով և հմտանալ մասնագիտության մեջ: Իսկ դպրոցականների մոտ սերմանվում է բնությունը սիրելու գաղափարը, քանի որ ողջ մարդկությունը համարվում է բնության մի մասնիկը՝ մարդոլորտը:

# Ճանաչողական ուղեցույց զբոսաշրջիկների համար...

ՀՀ բնապահպանության, ֆինանսների, տարածքային կառավարման և զարգացման, մշակույթի, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունների և ՀՀ բնապահպանության նախարարության բնության պետական թանգարանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեում:

Հանդիպմանը քննարկվել են Համաշխարհային բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում՝ զբոսաշրջության երթուղիները տեղեկատվական նշաններով ապահովելու հետ կապված հարցեր:

Ներկայացվել է զբոսաշրջային-տեղեկատվական նշանների տեղադրման և տեղեկատվական համակարգի ապահովման հայեցակարգի նախնական տարբերակը, ինչը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը՝ զբոսաշրջային արժեք ներկայացնող վայրերի, բնության հատուկ պահպանվող տարածքների (արգելոցներ, ազգային պարկեր, արգելավայրեր և բնութան հուշարձաններ) վերաբերյալ տեղի բնակչության և այցելուների իրազեկվածության բարձրացմանը:

Զբոսաշրջային ցուցանակները և նշանները կարևոր բաղադրիչ են այցելուների համար հաճելի և հյուրընկալ միջավայր ապահովելու համար: Զբոսաշրջային-տեղեկատու ցուցանակներն ուղղության ցուցիչ-նշաններ են, որոնք այլ նշաններից տարբերվում են նրանով, որ գրվում են սպիտակ տառերով շագանակագույն հիմնագույնի վրա, և կարող են պատկերանշաններ պարունակել այն տեղանվան վերաբերյալ, որի մասին տեղեկություն է ներկայացվում: Զբոսաշրջային-տեղեկատու նշանների գույնը և ոճը նույնականացվում է զբոսաշրջային ոլորտի հետ, և դրանք հեշտությամբ ճանաչելի դառնում ճանապարհորդների համար:



Վերոնշյալ գերատեսչությունների համատեղ ջանքերով կամփոփվեն զբոսաշրջային-տեղեկատվական ցուցանակների ուղեցույցների ստեղծման աշխատանքները և տեղեկատվական նշանները կտեղադրվեն Հայաստանի ողջ տարածքում:

# Օրեցօր սերտանում է նախարարություն քաղաքացիներ կապը

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի հանձնարարությամբ նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը փետրվարի 24-ին անցկացրել է քաղաքացիների ընդունելություն:

Հանդիպմանը ներկայացած մասնագետներն առաջարկել են մոտեցումներ ծառերի բնաշիվային աճի, պոչամբարների և այլ խնդիրների լուծումների վերաբերյալ: Նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը շնորհակալություն հայտնելով առաջարկների համար, հայտնել է, որ դրանք կդիտարկվեն ՀՀ բնապահպանության նախարարին կից գիտատեխնիկական խորհրդում, ինչպես նաև առաջիկայում իրականացվող բնապահպանական համապետական միջոցառումների ժամանակ:

Մի քանի քաղաքացիներ դիմել են ՀՀ բնապահպանության նախարարությունում աշխատանքի անցնելու խնդրանքով: Վերջիններիս պարզաբանվել է, որ նախարարության աշխատակազմում աշխատանքի կարելի է ընդունվել ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքի համաձայն, իսկ ոչ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնել ցանկացող քաղաքացիներին առաջարկվել է ներկայացնել մասնագիտական աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ:



Քաղաքացիների բարձրացրած հարցերին և առաջարկներին պարզաբանումներ են տվել նաև ընդունելությանը մասնակցող ՀՀ բնապահպանության նախարարության պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները:

## Գիրք նվիրելու մշակույթը մեր հասարակությանը կդարձնի առավել հոգեւոր



Գիրք նվիրելու օրվա ընթացքում վերաբացվել է «Նոյյան Տապան» գրախանութը: Գրախանութի վերաբացման հանդիսավոր արարողությանը մասնակցել է նաեւ Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը: Նախարարը շրջել է գրախանութում, ծանոթացել վաճառվող գրքերի նոր տեսականուն:

Առաջնորդվելով օրվա խորհրդով՝ Արծվիկ Մինասյանը մշակույթի նախարար Արմեն Ամիրյանին եւ «Նոյյան Տապան» գրախանութի տնօրենին նվիրել է «Հայաստանի կարմիր գիրք» երկհատորյակը: Այն ներառում է Հայաստանի կենդանիների եւ բույսերի կարմիր գրքերը:

Նախարարը նաեւ գրքեր է գնել՝ իր աշխատակիցներին նվիրելու համար:

«Հուսով եմ, որ մեր մեծ բանաստեղծի ծննդյան օրվա շրջանակներում կազմակերպվող այս հրաշալի միջոցառումը հնարավորություն կտա մեր քաղաքացիներին, հատկապես՝ երիտասարդներին, վերադառնալու գիրք կարդալու մշակույթին, որովհետեւ դա այն հիմնական կապիտալն է, որը միշտ էլ արժեւորված է»,- ասել է ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը:

## «Բարեկենդանի» գեղեցիկ ծեսը Բնության թանգարանում

ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանում անցկացվել է «Բարեկենդանի ծես» խորագրով միջոցառումը: Այն տարբերվում էր մյուս միջոցառումներից, քանի որ կյանքի էր կոչվում հին հայկական ամենատարածված ծեսերից մեկը: Հայաստանի բնության պետական թանգարանը ոչ միայն շրջակա միջավայրի պահպանության քարոզչություն և էկոկրթություն է իրականացնում, այլ նաև նպաստում է հին հայկական ավանդական ծեսերի պահպանմանը: Միջոցառմանը մասնակցել են Վ. Սարոյանի անվան թիվ 138 միջն. դպրոցի սաները: ԿԵԱՆ-Հայ ժողովրդական մշակույթի ուսումնա-գործնական կենտրոնի պատմաբան, հոգեբան Վանուհի Սիմոնյանը, ժողովրդական վարպետ, հոգեբան Սրբուհի Մովսիսյանը ներկայացրել են Բարեկենդանի խորհուրդն ու ծիսական ընթացքը: Ծիսակատարությունը ներկայացված էր երգի, պարի («Գյովընդ» և «Թամզարա») և խաղի («Գացեք տեսեք» և «Սուտլիկ հարսանիք») միջոցով: Միջոցառման ընթացքում աշակերտները և թանգարանի աշխատակիցները պատրաստեցին պահքի տիկնիկ՝ «Ակլատիզ»: Ծեսի ավարտին կատարվեց «Ուտիս»-ի հեռացումը և «Ակլատիզ»-ի մուտքը: Թանգարանը կազմակերպել էր Բարեկենդանի ծեսին նվիրված հյուրասիրություն՝ ծիսական ուտեստներով: Միջոցառումն ամփոփել է թանգարանի տնօրեն Գայանե Ղազարյանը՝ Վանուհի Սիմոնյանին և Սրբուհի Մովսիսյանին պարգևատրելով շնորհակալագրերով:



*Նախագիծը՝* ***Արծրուն Պետանյանի***
*Խմբագիր՝* ***Մանվել Մկրտչյան***
*Ձևավորումը՝* ***Նարինե Բաղդասարյանի***
*Նյութերը՝* ***ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության***

*Հեռախոս՝* ***011 818 517***